# ԴՎԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ
## (ըստ 1992-1993 թթ. պեղումների արդյունքների)

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Դվինի՝ դեռևս մ. թ. ա. I հազ. սկզբից իր գործառույթը տևականորեն պահպանած հնավանդ սրբավայրում էր գտնվում՝ IV-VII դարերում ձևավորված, նոր դավանանքի նշանակալի կենտրոններից մեկը: Պեղածո փաստացի նյութի և գրավոր աղբյուրների տվյալների համեմատական վերլուծությունը դեռևս 1950-ականներին հնարավորություն էր ընձեռել բացահայտելու IV դ. կառուցված Սբ. Գրիգոր մայր տաճարի վաղագույն եռանավ շինությունը և հետագայում նրա կրած հատակագծային փոփոխությունները[1]: V դ. 60-70-ականներին Հայոց հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվին տեղափոխելու կապակցությամբ իրականացվող լայնածավալ շինարարության ընթացքում այն վերակառուցելիս հավելվել են ավագ խորանին կից ավանդատները[2], արտաքին սյունասրահը, ձևավորվել է խաճանկարով նոր հատակ, նորոգվել է տանիքը: Սեբեոսի վկայությամբ՝ VI դ. 70-ականներին, Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) գլխավորությամբ հայերի ապստամբական գործողություններին ի պատասխան, պարսիկները Դվինում «զեկեղեցի սրբոյն Գրիգորի … հարին հուր և այրեցին»[3]: VII դ. սկզբին՝ Հայոց մարզպան Սմբատ Բագրատունու օրոք, ավերված եռանավ եկեղեցին վերականգնվեց խաչաձև նոր հատակագծով՝ որպես գմբեթավոր սրահ: Դվինի մայր տաճարը վերջնականապես ավերվեց 894 թ. մեծ երկրաշարժի ժամանակ:

Մայր տաճարը ամերիկյան ծրագրով կոնսերվացնելուց առաջ շերտագրական որոշ հարցեր բացահայտելու նպատակով 1992-1993 թթ. դաշտային հետազոտական աշխատանքներ կատարվեցին եկեղե-

---

[1] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Եր., 1952, էջ 88-100, տե՛ս նաև **Ա. Ա. Քալանթարյան, Կ. Կ. Ղաֆադարյան**, Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր, «Պատմաբանասիրական հանդես», 1990, № 1, էջ 140-142:

[2] Ըստ 1990-ականների հետազոտությունների տվյալների՝ ցարդ ընդունված տեսակետը կարոտ է ճշգրտման (տե՛ս **Ա. Քալանթարյան, Կ. Ղաֆադարյան, Ն. Հակոբյան, Գ. Քոչարյան, Մ. Պետրոսյան, Ա. Հակոբյան,** Նոր տվյալներ Դվինի Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու վերաբերյալ, «Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան», Զեկուցումների թեզիսներ, Եր., 1994, էջ 46-47):

[3] «Պատմութիւն Սեբէոսի», Աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Եր., 1979, էջ 68, Ը:

ցու արևմտյան մասում[4]:

Հյուսիսարևմտյան՝ 3,20 x 5,60 մ հատվածում, 1,15 մ խորության վրա[5] մասամբ պահպանված է VII դ. թվագրվող հատակը: Վաղմիջնադարյան կղմինդրների բազմաթիվ բեկորներով, սպիտակ ավազաքարի ու կարմիր տուֆի խճով հագեցած վերին հորիզոններին՝ 1,70 մ խորության վրա, հաջորդեց անտիկ շրջանի խեցատների պարունակությամբ, 0,30 մ հզորությամբ մանրահատիկ հողաշերտ: 2,0÷2,40 մ խորության մեջ ի հայտ եկան վաղերկաթեդարյան գորշավուն մոխրաշերտ, թխագույն խեցանոթների բեկորներ, իսկ մայր հողի շիկավուն խճաքարի շերտի[6] վրա մեկ քարի բարձրությամբ, 1,16 մ լայնությամբ՝ հիմնապատերի աղճատված մնացորդներ: Վաղերկաթեդարյան այս միջավայրից ակնհայտորեն զատվեց փայլեցված սև մակերևույթով, կարմիր աստառով վաղբրոնզեդարյան մի խեցաբեկոր[7]: Պեղավայրի արևելյան հատվածի վերին շերտերում հայտնաբերվեցին ուշ շրջանի (XV-XVIII դդ.) թրծած դեղնավուն աղյուսե պատերով սալածածկ դամբարաններ[8]:

Եկեղեցու արևմտյան հիմքին կցված, հյուսիսային հիմնապատին զուգահեռ՝ դեպի հարավ, 3,20 մ հեռավորության վրա բացվեց «նորահայտ պատ» (ստորին շարքին կից արևելյան՝ 1,60 մ երկարությամբ հավելվածի հետ ընդհանուր երկար.՝ 6,0 մ, հաստ.՝ 1,10 մ, բարձր.՝ 1,50 մ): Վերջինս դրված է VII դ. հատակի մակարդակից 2,30 մ խորը՝ մայր հողի շիկավուն խճի շերտի վրա, վաղերկաթեդարյան խեցատների միջավայրում: Սրբատաշ սպիտակ ավազաքարով շարված[9], կրաշաղախով և սպիտակ խճի լիցքով կապակցված այդ պատի ստորին հատվածում կա 0,72 մ բարձրությամբ սրբատաշ մոխրագույն բազալտի երկու շարք:

Փաստորեն «նորահայտ պատը», հատելով վաղմիջնադարյան, ան-

---

[4] Տե՛ս Գ. Քոչարյանի 1992, 1993 թթ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինի հնագիտական արշավախմբի գրադարանում):

[5] Բոլոր չափումները տրված են եկեղեցու վերականգնված արևմտյան պատի վերին նիշից:

[6] Գետնի վերին շիկավուն խճաքարի՝ 0,80÷1,50 մ հաստությամբ հողախառը շերտ է առկա եկեղեցու և քննվող սրբավայրի ամբողջ տարածքի տարբեր խորություններում (տե՛ս **Ա. Քալանթարյան, Կ. Ղաֆադարյան** և այլք, Նոր տվյալներ Դվինի Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու վերաբերյալ, էջ 47):

[7] Դվին հնավայրի ցարդ հայտնի հնագույն՝ վաղբրոնզեդարյան շերտը թվագրվում է մ. թ. ա. III հազ. երկրորդ կեսից ոչ ուշ և համաժամանակյա գտածոների տարածվածության սահմաններում՝ բլրից զատ, ընդգրկվում է նաև քննվող սրբավայրի տարածքը (տե՛ս **Кушнарева К. Х.** Древнейшие памятники Двина, Ер., 1977, էջ 5-10):

[8] Դամբարաններից առաջինն ամբողջական աղյուսաշար արկղ էր (2,30 x 0,60-0,70 x 0,40 մ), որի մեջ ննջեցյալ՝ մեջքի վրա պառկած, դեմքը՝ դեպի արևելք, երկրորդը ճզմված էր վերին հաստ հողաշերտի ծանրությունից, երրորդը քանդված ու աղճատված վիճակում էր: Արևելքից սրանց եզերում էր հյուսիսից հարավ ձգված սպիտակ ավազաքարի, կարմիր ու սև տուֆի բարակ սալերով անկանոն շարված հիմնապատ (2,30 x 0,90 մ):

[9] Քարերի միջին չափերն են՝ 0,41 x 0,28 x 0,08 - 0,42 x 0,25 x ? մ: Կանոնավոր են շարված հատկապես ստորին շարքերը ( մոտ 1, 10 մ բարձրությամբ), իսկ վերինները տարբեր չափերի տձև քարեր են:

տիկ և վաղերկաթեդարյան մշակութային հորիզոնները, ներթափանցել է շիկավուն խճով մայր շերտի մեջ: Իսկ կցակառույցի արևելյան մշակութային նստվածքների անխաթար վիճակը վկայում է, որ պատը չի ձգվել եռանավ եկեղեցու ամբողջ երկայնքով՝ իր վրա կրելով ձախակողմյան շարքի յոթ սյուները:

Եկեղեցու արևմտյան հիմնապատի վերին երեք շարքերի արտաքին երեսը լրացուցիչ ամրացված է կրաշաղախի հաստ շերտով, իսկ ստորին՝ համեմատաբար ներս ընկած շարքերը խորանում են մայր հողի շիկավուն խճի շերտի մեջ: Աստիճանաբար դժվար հաղթահարելի խճի շերտի պատճառով (հատկապես հյուսիսային և արևմտյան պատերի հատման անկյունում)՝ 3,60 մ խորության հասնելուց հետո դադարեցվեցին արևմտյան պատի հիմքը բացելու աշխատանքները:

Պարզվեց, որ հյուսիսարևմտյան անկյունից 3,30 մ դեպի արևելք[10], 2,5 մ երկարությամբ հատվածում բացակայում է եկեղեցու հյուսիսային պատի հիմքը (նկ. 1): Այս «կեղծ մուտքի» պեղումներով հայտնաբերվեցին V-VII դդ. կղմինդրների բազմաթիվ բեկորներով ավազաքարի ու տուֆի խճառատ շերտ (0,60÷1,20 մ խոր. մեջ)[11], մ. թ. ա. II-մ. թ. I դդ. գունազարդ տափաշշերի, սափորի, թասերի խեցատներով մանրահատիկ հողաշերտ (1,20÷1,40 մ խոր. մեջ), մ. թ. ա. X-VIII դդ. մեհյանի կավե, խոյազարդ զոհարանի և փայտի մոխրի ու ածխացած կտորների պարունակությամբ խեցանոթների բեկորներով գորշ, վառված շերտ (1,40÷1,70 մ խոր. մեջ), մայր հողի շիկավուն խճաքարի շերտ (մոտ 1,70 մ խորության մեջ): Այսպիսով, «կեղծ մուտքի» տակ եկեղեցու հյուսիսային հիմնապատի իսպառ բացակայությունը և մշակութային շերտերի համեմատաբար անխաթար առկայությունը հավաստում են, որ բացվածքը եղել է ի սկզբանե:

«Կեղծ մուտքի» հարցը պարզելու համար պեղումներ կատարվեցին եկեղեցուց դուրս: Այստեղ (2,40 մ խորության վրա) պահպանվել են V դ. արտաքին սյունասրահին վերագրվող հիմքեր՝ հիմնականում մեկ քարի բարձրությամբ (արևելյան հիմքը՝ 2,10 x 1,50 մ, արևմտյանը՝ 2,65 x 1,70 մ, հյուսիսայինը՝ 1,82 x 1,50 մ)[12]: Պահպանվել է միայն արևելյան պատի հիմքի 0,50 մ բարձրությամբ երկու շարքը, որը դրված է հիշյալ

---

[10] Եկեղեցու հյուսիսարևմտյան անկյունից 1,20 մ դեպի արևելք (1,70 մ խոր. վրա), հյուսիսային պատի երկայնքով բացվեց VII դ. ոչ վաղ կառուցված, սպիտակ ավազաքարի խճով, կարմիր և թխագույն տուֆի տձև կտորներով, կրաշաղախով կապակցված անկանոն շարված պատ (երկար.՝ 2,10 մ, հաստ.՝ 0,44 մ). չի բացառվում սրա անմիջական առնչությունն ուշ շրջանի դամբարաններին:

[11] Պայմանականորեն զրոյական կետ ենք ընդունել հյուսիսային պատի՝ «կեղծ մուտքի» արևմտյան եզրի վերին նիշը:

[12] Արտաքին սյունասրահի շինարարական մնացորդների 30 սմ հաստությամբ վերին շերտը պարունակում էր VII դ. կղմինդրների բեկորներ, IX դ. խուփ (ուղղահայաց բռնակը թեթևակի փոսվածքով), գորշ, մրապատ կճուճների, աղյուսների կտորտանք: Սա պարզապես լիցք էր. նախորդ տարիներին եկեղեցու հիմքերը բացել են, հետո սրանցով ծածկել:

շիկավուն խճի շերտի վրա: Այս հիմնապատի տակ գտնվում են քարաշեն հիմքեր, որոնք ակնհայտորեն առնչվում են եկեղեցու ներսում բացված մ. թ. ա. I հազ. սկզբի շինարարական մնացորդներին: Տվյալ հատվածը պեղելիս ի հայտ եկան եկեղեցու հյուսիսային հիմնապատի արտաքին երեսի՝ կրաշաղախով ամրացված սպիտակ ավազաքարեր:

Պեղումներ կատարվեցին նաև կաթողիկեի հարավարևմտյան (3,80 x 3,20 մ) հատվածի վերին շերտում (1,50 մ խորությունից սկսած)[13]: Տեղ-տեղ ի հայտ եկան V-VII դդ. կղմինդրների բեկորներ, իսկ հարավարևմտյան անկյունում (1,70 մ խորության վրա) բացվեց ուշ շրջանի (XV-XVIII դդ.) աղյուսածածկ հատակով դամբարան[14]:

Եկեղեցու հիմքը բացելու համար պեղվեց հարավային պատի երկայնքով, վերջին երկու որմնասյան հիմքերի միջև 6,30 x 0,75 մ հետախուզահոր: Մոտ 1,12 մ խորությունից սկսած բացվեց[15] սպիտակ խճի, ավազի, մոխրի շերտ՝ հագեցած ժամանակագրորեն խառը նյութերով՝ IV-VI դդ. թերի կոտրված տարատեսակ կղմինդրներ, V դ. խճանկարի մնացորդներով կրաշաղախի բազմաթիվ խոշոր բեկորներ, անտիկ և վաղերկաթեդարյան խեցատներ: Երկրորդ որմնասյան հիմքի շարվածքի մեջ բացվեցին կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր և կամարի մնացորդ: Իսկ առաջին որմնասյան հիմքը կրկնակի օգտագործված անտիկ սյունախարիսխ է, որի տակ առկա է միայն մեկ քար (նկ. 2):

Սրբատաշ քարերով շարված, 1,60 մ խորությամբ հարավային հիմնապատի հինգերորդ շարքը եզերված է կրաշաղախի դուրս պրծած քիվանման զանգվածով, իսկ հիմքի երկայնքով մոտ 2,60 մ խորության վրա դարձյալ առկա է նման զանգված: Արդեն 3,25 մ խորության վրա հետախուզահորում ի հայտ եկավ կապտավուն ավազ, իսկ սրա տակ՝ 4,0 մ վրա, բացվեց կավե հարթակ հիշեցնող զանգված՝ հար և նման եկեղեցու արևելյան հատվածում բացահայտվածներին[16]: Այսինքն՝ եկեղեցու հիմքերը դրված են գետնի ստորին շերտի՝ կավե միասեռ զանգվածի վրա (նկ. 2): Ընդ որում՝ գետնի վերին՝ շիկավուն խճաքարի շերտին նախորդող կապտավուն ավազի շերտը եկեղեցու արևելյան հատ-

---

[13] Իբրև զրոյական կետ ընդունել ենք եկեղեցու արևմտյան վերականգնված պատի վերին նիշը:

[14] Հարավարևմտյան անկյունում բացվեցին կրկնակի օգտագործված, թրծած աղյուսների մեծ քանակությամբ կտորներ և սրանցով (տեղ-տեղ երկու շերտով) շարված հատակ (սակավաթիվ ամբողջական աղյուսների չափերն են 21 x 21 x 3,5 սմ): Հատակը հյուսիսից և արևելքից շրջափակված էր քարե պատերի մնացորդներով, իսկ հարավից և արևմուտքից՝ եկեղեցու հարավային և արևմտյան պատերի հիմքերով: Աղյուսե հատակի վրա առկա էին մարդու կմախքի մնացորդներ, երկաթե ճարմանդի օղակներ, մեխեր: Ճիշտ նման քարե պատերով եզերված, բայց կավածեփ հատակով դամբարան բացվել էր եկեղեցու հարավային պատին կից՝ դրսից:

[15] Պայմանականորեն զրոյական կետ ենք ընդունել որմնասյան հիմքի վերին նիշը:

[16] Սբ. Գրիգոր եկեղեցու արևելյան հատվածի պեղումների մասին տե՛ս **Ն. Հակոբյան**, Դվինի կենտրոնական թաղամասի 1990-1993, 1999 թթ. պեղումների արդյունքները, «Հին Հայաստանի մշակույթը», XIII (Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի), Եր., 2005, էջ 208-209:

վածում ավելի հաստ է, քան արևմտյանում:

Եկեղեցու հարավային հիմնապատից դեպի հյուսիս՝ 0,85 մ հեռավորության վրա, գրեթե անխաթար պահպանված էր մոտ 1,0 մ հզորությամբ վաղերկաթեդարյան շերտ: Միջին ու փոքր չափերի գլաքարերով շարված մոխրախառն հատակի տակ համատարած մոխիր էր և խեցեղեն (կարասի շրթնամաս, փայլեցված, թեք մատնեքազարդ կճուճների, ուռուցիկ կամ փորագիր ալիքաձև ու սերմնազարդ զարդագոտիներով տարատեսակ անոթների, բարձր կողերով շարժական օջախկրակարանների բեկորներ): Առկա էին նաև թերի կոտրված, կավե, սերմնազարդ պատկերով կուռք-արձանիկներ, աշխատանքային քարե գործիքներ, չեչոտ որձաքարե մակույկաձև աղորիք, գոգավոր խոշոր թասի բեկոր, սանդի թակ և այլն:

Մ. թ. ա. I հազ. սկզբի հորիզոնը պեղելիս եկեղեցու հարավային պատին զուգահեռ՝ դեպի հյուսիս, 3,20 մ հեռավորության վրա բացվեց (3,65 մ երկար., 0,95 մ հաստ.) հիմնապատ՝ 2,0 մ երկարությամբ կից հավելվածով: Սրանք, փաստորեն, եկեղեցու հյուսիսային պատից հարավ՝ 3,20 մ հեռավորության վրա բացված «նորահայտ պատի» և սրա հավելվածի համաչափ կրկնությունն են:

Պեղվեց նաև հարավային խորանի դիմացի հողաթումբը: Վաղմիջնադարյան, անտիկ, վաղերկաթեդարյան խեցատներից, կրաշաղախի կտորներից ու քարերից բաղկացած զանգվածեղ լիցք-հողաթմբի տակ՝ արևելյան մասում, բացվեց եկեղեցու VII դ. գմբեթակիր հարավարևմտյան մույթի աղճատված հիմքը՝ շարված կրկնակի օգտագործված սպիտակ, խոշոր ավազաքարերով, սյունախարիսխների բեկորներով, ամրացված առատ կրաշաղախով: Իսկ արևմտյան մասում ի հայտ եկավ XV-XVIII դդ. ավերված գերեզման՝ կմախքի մնացորդներով: Ընդ որում՝ գմբեթակիր մույթի հիմքը մասամբ ծածկում է V դ. խաճանկար հատակի ծայրարևելյան հատվածը[17]:

Այսպիսով, հնագիտական տեղեկատվության տվյալների ամփոփումը ուրվագծում է կաթողիկե եկեղեցու արևմտյան մասում մշակութային համալիրների ժամանակագրական հետևյալ հերթագայությունը.

- **վաղերկաթեդարյան** (մ. թ. ա. X-VIII դդ.)՝ 0,40÷1,0 մ հզորությամբ, ավերված, հրկիզված գորշավուն մոխրաշերտ, քարաշեն հիմնապատերի մնացորդներ, սրբարան (պատկերազարդ կավե զոհարանի, կուռք-արձանիկների, ծիսական խեցանոթների բեկորներ, աշխատանքային քարե գործիքներ). սրանք անմիջականորեն առնչվում են ամբողջ բլրով մեկ վավերացված՝ մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին հիմնահատակ կործանված ու հրկիզված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի վերին մոխրառատ հորիզոնին[18],

---

[17] Տե՛ս **Ա. Պատրիկ,** Խճանկարային արվեստը հայերի մոտ և Դվինում հայտնաբերված խճանկար հատակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 316, նկ. 2:

[18] Մանրամասն տե՛ս **Кушнарева К. Х.** նշվ. աշխ., էջ 10-39, **Գ. Քոչարյան,** Դվին

- **անտիկ ժամանակաշրջանի** (մ. թ. ա. II- մ. թ. I դդ.)՝ մոտ 0,20÷0,30 մ հզորությամբ մանրահատիկ հողաշերտ, գունազարդ և հասարակ խեցեղեն սպասք (տափաշշերի, երեքնուկաձև ծորակով անոթների, օյնոխոյայի, թասերի, ըմպանակների, պնակի սակավաթիվ բեկորներ). սրանք վերաբերում են մ. թ. ա. X-VIII դդ. և մ. թ. IV-V դդ. շերտերի միջև բացահայտված Դվինի՝ 0,20÷1,50 մ հզորությամբ անտիկ շերտին[19],

- **վաղմիջնադարյան** (IV-VII դդ.) մշակութային համալիր՝

ա) IV դ.՝ սպիտակ ավազաքարե սրբատաշ քարերով շարված հիմնապատեր, հատակ, կղմինդրներ՝ լայնակի եզրային ելուստ-թմբիկով, ուղղանկյուն, տափակ սալերի բեկորներ. սրանք վերագրվում են եկեղեցու IV դ. եռանավ շինությանը[20],

բ) V դ. խճանկարի մնացորդներ՝ խորանարդաձև, սպիտակ, երկնագույն, վարդագույն, կարմիր, շագանակագույն՝12x12x4-10 մմ բնական քարեր, սրանցով ագուցված կրաշաղախի զանգվածեղ կտորներ, կղմինդրներ՝ մի կողմից նեղացող կողերով տափակ խոշոր սալեր և լայն փռվածքով կիսափողրակավոր կալիպտերներ[21], արտաքին սյունասրահին վերագրվող շինարարական մնացորդներ. թվարկածները վերաբերում են 470-ականներին իրականացված լայնածավալ շինարարությանը (խճանկարով ձևավորված նոր հատակ, նորոգված տանիք, արտաքին սյունասրահ),

գ) VII դ. հատվածաբար պահպանված սալահատակ, շինարարական թափոնների, սպիտակ ավազաքարի և կարմիր տուֆի խճառատ շերտ, կղմինդրների՝ մի կողմից նեղացող կողերով տափակ սալեր և օձիք-թմբիկով կիսափողրակավոր կալիպտերներ[22], հարավարևմտյան գմբեթակիր մույթի հիմք. սրանք վերաբերում են 610-ականներին՝ կաթողիկեի՝ որպես խաչաձև հատակագծով գմբեթավոր սրահի վերակառուցված շինությանը,

- **ուշ շրջանի** (XV-XVIII դդ.)՝ թրծած դեղնավուն աղյուսե պատերով սալածածկ թաղման արկղեր և քարե պատերով եզերված, աղյուսե հատակով դամբարաններ՝ ներթափանցված վաղմիջնադարյան հորիզոնների մեջ[23]:

---

բազմաշերտ հուշարձանի ձևավորման ընթացքը, «Հանդէս ամսօրեայ», 2017, թիւ 1-12, էջ 5-10:

[19] Մանրամասն տե՛ս **Գ. Քոչարյան,** Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, «Բանբեր հայագիտության», Հայագիտական միջազգային հանդես, 2014, № 1(4), էջ 26-31:

[20] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 97, **Գ. Քոչարյան,** Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն, «Բանբեր Երևանի Համալսարանի. Հայագիտություն», 2016, № 2(20), էջ 28-30, նկ. 1:

[21] Տե՛ս **Գ. Քոչարյան,** Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն, էջ 30-31, նկ. 2, 1,2:

[22] Տե՛ս նույն տեղը, էջ 33-34, նկ. 3:

[23] Դվինի լքված բնակավայրը XV-XVIII դդ. վերածվել է դամբարանադաշտի. դեռևս 1937 թ. կաթողիկեն բացելիս պեղվել են այդօրինակ բազմաթիվ դամբարաններ (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 40-43, 65):

«Նորահայտ պատերի» արևելյան մասում և եկեղեցու հյուսիսային հիմնապատի «կեղծ մուտքի» բացվածքում մշակութային շերտերի հերթագայության համեմատաբար անխաթար վիճակը հավաստում է, որ եկեղեցու պատերը դրվել են ժապավենաձև հիմքերի վրա (հմմտ. նաև՝ հարավային հիմնապատից 0, 85 մ հեռու գտնվող 1,0 մ հզորությամբ վաղերկաթեդարյան շերտի գրեթե անխաթար առկայության փաստը):

Այնուհանդերձ հնագիտական յուրաքանչյուր շերտ ակնհայտորեն հատել և կրճատել է նախորդ շրջանի մշակութային նստվածքները, հաճախ նաև խաթարել ու խառնել տարաժամանակյա հորիզոնների նյութերը: Այսպես օր.՝ VII դարում եկեղեցու հիմնական վերակառուցման ընթացքում V դ. խիստ վնասված խճանկարը մասամբ քանդվել է, ու կրաշաղախի զանգվածեղ կտորները հին կղմինդրածածկի մնացորդների հետ մեկտեղ լցվել են եկեղեցու հարավային հիմքի խրամատի մեջ: Այստեղ առկա են նաև անտիկ և վաղերկաթեդարյան աղճատված հորիզոնների խեցատներ:

Դվինի մայր տաճարի վաղմիջնադարյան հնագիտական համալիրները ժամանակագրորեն հիմնականում համապատասխանում են ցարդ բացահայտված շինարարական շրջափուլերին: Մինչդեռ **IV դ.** շերտի եռանավ շինության՝ կրաշաղախով ամրացված հիմնապատերը, ավագ խորանն ամբողջությամբ[24], հարավային պատի արևմտյան նախավերջին որմնասյան հիմքը, հարավային ու հյուսիսային թևերին զուգահեռ «նորահայտ պատերը» կրկնակի օգտագործված սրբատաշ քարերով են շարված: Այստեղ առկա են նաև մշակութային նախորդ շրջանի շինություններին պատկանող ճարտարապետական տարրեր՝ կամարի, քիվի քարեր, ձևավոր կողապատկերով, խորաքանդակ բուսազարդ գոտիով անտիկ շրջանի տուֆե սյունախարիսխ[25] (նկ. 2) և այլն: Քննվող սրբավայրի՝ վաղմիջնադարյան հոգևոր մյուս շինություններում ևս նման պատկերի ակնհայտ ներկայությունը հավաստում է այստեղ նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցների երբեմնի գոյություն:

1950-ականներին Կարո Ղաֆադարյանը նախնական դիտարկումներով Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու IV դ. շերտի եռանավ շինության մասին եզրակացրել է, որ սկզբնապես կառուցված է եղել դեռևս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո վերածվել է եկեղեցու[26]: Սույն կարծիքի ճշմարտացիությունը հավաստող առավել

---

[24] Ավագ խորանի որոշ սալերի վրա պահպանվել են բազմերանգ որմնանկարի միմյանց հետ չկապակցվող հետքեր (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 91-92, **Ն. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 209):

[25] Հարավային պատի արևմտյան վերջին որմնասյան հիմքը կրկնակի օգտագործված անտիկ շրջանի տուֆե սյունախարիսխ է (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 95, նկ. 67):

[26] Տե՛ս նույն տեղը, էջ 88:

համոզիչ վկայություններ ունենալու համար անհրաժեշտ են Դվինի մայր տաճարի շինարարական հորիզոնների հետազոտական ընդլայնված աշխատանքներ:

**Բանալի բառեր** - *Դվինի Մայր տաճար, շերտագրական վերլուծություն, հնագիտական համալիրներ, շինարարական շրջափուլեր, նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցներ, ավանդապահ սրբավայր*

**ГАЯНЭ КОЧАРЯН** – ***О стратиграфии Кафедрального собора в Двине (по результатам раскопок 1992-1993 гг.).*** – Стратиграфический анализ раскопок выявляет, что раннесредневековые археологические комплексы хронологически соответствуют основным строительным этапам Кафедрального собора св. Григория. Вместе с тем в кладках фундамента первоначальной трёхнефной базилики IV в. зафиксировано множество гладко тёсаного белого песчаника и различных архитектурных элементов вторичного использования. Такая же картина прослеживается и в других монументальных зданиях Двина того времени. Это примечательное обстоятельство свидетельствует, что в античную эпоху здесь имели место дохристианские культовые сооружения.

**Ключевые слова:** *Двинский кафедральный собор, стратиграфический анализ, археологические комплексы, строительные этапы, дохристианские культовые сооружения, традиционное святилище*

**GAYANE KOCHARYAN** – ***On Stratigraphy of Dvin Cathedral (due to 1992-1993 excavation results).*** – Stratigraphic analysis of the data of excavation reveals a chronological correspondence of the Early Medieval archaeological complexes with the main building stages of St. Gregory Cathedral. However, the presence of double massive use of fine white sandstones and architectural elements is attested in the foundations of the preliminary three-nave basilica of the 4$^{th}$ century AD. The same picture is represented in other synchronous monumental buildings of Dvin. That considerable fact testifies to the existence pre-Cristian cultic structures in Dvin's traditional sanctuary of the Classical period.

**Key words:** *Dvin Cathedral, stratigraphic analysis, archaeological complexes, building stages, pre-Cristian cultic structures, traditional sanctuary*

*Նկ. 1*

Դվինի Մայր տաճարի հյուսիսարևմտյան անկյունը և հյուսիսային պատի արևմտյան հատվածի ներքին տեսքը:



*Նկ. 2*

Դվինի Մայր տաճարի հարավային պատի արևմտյան հատվածի ներքին տեսքը: Չափագրությունը՝ Արմեն Հակոբյանի